ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի
2026թ. թիվ 1 նիստում
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Է. Ղազարյան
«17» հունվարի 2026թ.

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԷԹԻԿԱՅԻ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

I.Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգի նպատակն է սահմանել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի (Համալսարան, ԳՊՀ) էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնները՝ որպես Համալսարանի գործունեության բարոյա-էթիկական կողմնորոշիչներ:
2. ԳՊՀ էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը ընդունում և դրանում փոփոխություններ ու լրացումներ է կատարում «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը:
3. Համալսարանում էթիկան ընդունվում է որպես մասնագիտական և աշխատանքային բարեվարքության կանոնների համակցություն, որոնց հիման վրա ԳՊՀ-ում իրականացվում է կրթական, գիտական, աշխատանքային գործունեությունը:
4. ԳՊՀ էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոնակարգը վերաբերում է Համալսարանի վարչական, ակադեմիական, ուսումնաօժանդակ, տնտեսատեխնիկական անձնակազմերի անդամներին, ուսանողներին (այսուհետ՝ դերակատարներ), ովքեր այդ կանոնները պարտավոր են կիրառել միմյանց հետ հարաբերություններում, ինչպես նաև Համալսարանի արտաքին գործընկերների և հանրության հետ առնչություններում:
5. ԳՊՀ էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոնները ներառում են բարոյական սկզբունքներ և արժեքային կողմնորոշիչներ, որոնք նպաստում են Համալսարանի դերակատարների կողմից իրենց գործառույթների պատշաճ իրականացմանը, պարտավորությունների բարեխիղճ կատարմանը, Համալսարանի նկատմամբ հանրային վստահության ապահովմանը:
6. ԳՊՀ-ում դերակատարների փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրության նորմերով, սույն կանոնակարգում նախատեսված կանոններով, Համալսարանի ներքին իրավական այլ ակտերով սահմանված դրույթներով՝ կամային և անկանխատեսելի վարքագծի դրսևորումներից, էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության նորմերի

խախտումներից խուսափելու, սուբյեկտիվ որոշումների կայացումը կանխելու նպատակներով:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԷԹԻԿԱՅԻ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. Համալսարանում կիրառվող էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության սկզբունքներն են.
   1) ակադեմիական ազնվությունը,
   2) սոցիալական արդարությունը,
   3) ժողովրդավարությունը,
   4) քաղաքական զսպվածությունն ու չեզոքությունը,
   5) ճշմարտախոսությունը,
   6) օբյեկտիվությունը,
   7) անաչառությունը,
   8) հաշվետվողականությունը,
   9) թափանցիկությունը և հրապարակայնությունը,
   10) փոխադարձ հարգանքը,
   11) փոխադարձ վստահությունը,
   12) փոխադարձ ուշադրությունն ու հոգատարությունը,
   13) բարեխղճությունը,
   14) նվիրվածությունը,
   15) պատասխանատվությունը:

III. ՀԱԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

8. Համալսարանում էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության հիմնարար կանոն է ակադեմիական ազնվությունը, որի համաձայն դերակատարները պետք է խուսափեն անազնիվ վարքագծի ցանկացած դրսևորումից՝ խարդախությունից, ստախոսությունից, խաբեությունից, գողությունից, շորթումից, կաշառքի պահանջից, առաջարկից և կաշառքի միջնորդությունից, արտագրությունից, գրագողությունից, այլ խախտումներից:
9. Համալսարանում դերակատարների համար էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության ներքին կանոն է սոցիալական արդարության, բոլոր հարաբերություններում անկողմնակալության և անաչառության պահպանումը:
10. Համալսարանի դերակատարները գործում են ժողովրդավարության և մասնակցային կառավարման սկզբունքներով, յուրաքանչյուրի ազատ խոսքը և կարծիքը հարգելու կանոնով:
11. Համալսարանի բոլոր դերակատարները ԳՊՀ-ում պահպանում են քաղաքական զսպվածության և քաղաքական հարցերի նկատմամբ չեզոքության սկզբունքները:

12. Արգելվում է Համալսարանում քաղաքական, կուսակցական, կրոնական գործունեության ծավալումը և քարոզչություն իրականացումը, այդ թվում՝ քաղաքական, կուսակցական, կրոնական գործունեություն կամ քարոզչություն իրականացնելու նպատակով ԳՊՀ ֆինանսական, տեղեկատվական, նյութական միջոցները, տարածքները, տարբերանշանը, մարդկային ռեսուրսներն օգտագործելը, ինչպես նաև քաղաքական, կուսակցական, կրոնական քարոզչություն կամ գործունեություն իրականացնելիս՝ ԳՊՀ անունից հանդես գալը:
13. Համալսարանում ցանկացած տիպի հաղորդակցության ընթացքում դերակատարները պարտավոր են պահպանել ճշմարտախոսության սկզբունքը՝ խուսափելով կեղծիքից, ստախոսությունից, փաստերի և իրավիճակների աղավաղումներից:
14. ԳՊՀ դերակատարները գործում են օբյեկտիվության և անաչառության սկզբունքներով:
ԳՊՀ ուսանողների գիտելիքները դասախոսների կողմից գնահատվում են օբյեկտիվության սկզբունքով՝ որպես անաչառության և սոցիալական արդարության ապահովման կարևոր պայման:
Օբյեկտիվության և սոցիալական արդարության սկզբունքներով է գնահատվում ԳՊՀ աշխատակիցների գործունեությունը:
15. ԳՊՀ-ում գործում են հաշվետվողականության կառուցակարգեր, որոնց միջոցով ապահովվում է դերակատարների գործունեության մշտադիտարկումը, արդյունքների վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմերի վերհանումը, բարելավումների իրականացումը:
16. Համալսարանում բոլոր գործընթացներն իրականացվում են թափանցիկության և հրապարակայնության սկզբունքներով՝ որպես օրինական և ժողովրդավարական գործունեության պարտադիր պայման:
17. Համալսարանի բոլոր դերակատարներն առաջնորդվում են փոխադարձ հարգանքի սկզբունքով՝ զերծ մնալով որևէ մեկի նկատմամբ բռնություն, սպառնալիք, թշնամանք, ատելություն, վիրավորանք դրսևորելուց, ցուցաբերելով հարգանք միմյանց հայացքների, գաղափարների, դիրքորոշումների, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելության և այլ արժեքների նկատմամբ:
18. Համալսարանում դերակատարները գործում են փոխադարձ վստահության սկզբունքով՝ որպես արդյունավետ համագործակցության, աշխատանքի հաջողության և կրթության արդյունավետության անհրաժեշտ պայման:
19. Համալսարանի դերակատարները պահպանում են փոխադարձ ուշադրության և հոգատարության կանոնները՝ որպես առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի և արդյունավետ կոլեկտիվ աշխատանքի պարտադիր պայման:
20. ԳՊՀ-ում կարևոր էթիկական կանոն են դերակատարների բարեխղճությունը և նվիրվածությունը գործին, ազնիվ, օբյեկտիվ և կոռուպցիայից զերծ գործունեությունն ու ակտիվ մասնակցությունը ԳՊՀ խնդիրների լուծմանը:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

21. Համալսարանի բոլոր դերակատարները պոզիտիվ պատասխանատվություն են կրում միմյանց, արտաքին գործընկերների և հանրության առջև՝ ԳՊՀ ներքին իրավական ակտերում, աշխատանքային և ուսումնական պայմանագրերում, պաշտոնի անձնագրերում և աշխատանքի նկարագրերում նախատեսված համապատասխան գործառույթները պատշաճ և ազնվորեն կատարելու, առանց կողմնակալության և վարքի անազնիվ դրսևորումների՝ ընդհանուր գործում ներգրավվածությունն ապահովելու համար:

22. Համալսարանի բոլոր դերակատարները պարտավոր են դրսևորել բարոյական վարվելակերպ՝ միմյանց նկատմամբ վերաբերելով առանց խտրականության՝ կապված անձանց սոցիալական վիճակի, ծագման, գույքային դրության, սեռի, քաղաքական կամ այլ հայացքների, հաշմանդամության, դավանանքի և այլ հանգամանքների հետ:

23. Համալսարանի բոլոր ուսանողները և աշխատակիցները հավասար են օրենքի առջև և հավասարապես պաշտպանվում են օրենքով: Արտոնյալ կարգավիճակ որևէ ուսանողին կամ աշխատակցին վերապահելը, դերակատարների համար ոչ իրավահավասար վիճակ ստեղծելը՝ որպես էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոնների կոպիտ խախտում, արգելվում է:

24. ԳՊՀ ֆինանսական կառավարումը, գնման և այլ տնտեսական գործընթացներն իրականացվում են օրինականության, արդարության, ազնվության, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով, էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոններին համապատասխան:

25. Համալսարանի դերակատարները պարտավոր են խնայողաբար վերաբերել ԳՊՀ գույքին, նյութական ռեսուրսներին և դրանք չօգտագործել անձնական նպատակների կամ շահ ստանալու համար:

26. Համալսարանի դերակատարները պարտավորվում են ձեռնպահ մնալ որևէ հանձնարարություն և խնդրանք կատարելուց, որոնք չեն բխում օրենքից, Համալսարանի կանոնադրությունից, էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոններից և դեմ են ԳՊՀ շահին:

27. Համալսարանի որևէ մարմնում հարց քննարկելիս, որը վերաբերում է ԳՊՀ աշխատակազմի անդամների անձնական շահին կամ նրա մերձավոր ազգականի շահին, տվյալ անդամը պարտավոր է հրաժարվել հարցի քննարկմանը մասնակցելուց:

28. Համալսարանի դերակատարներն իրավունք չունեն պահանջել կամ ընդունել կաշառք, կամ նյութական ծառայություն, ստանալ որևէ անձնական օգուտ՝ իրենց ծառայողական պարտականությունների կատարման կամ այդ պարտականությունների կատարումից ձեռնպահ մնալու դիմաց:

29. Համալսարանի վարչական և ակադեմիական անձնակազմի անդամները պարտավոր են անմիջապես հայտնել ԳՊՀ ռեկտորին կամ համապատասխան մարմիններին կաշառք առաջարկելու ցանկացած փորձի մասին:

30. Գործառույթների կրկնությունը բացառելու, պարտականությունների կատարումից խուսափում թույլ չտալու, էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոնների խախտումները կանխելու, դերակատարների իրավունքները և ակադեմիկան ազատությունները պաշտպանելու նպատակով աշխատակիցները սահմանված կարգով դիմում են ԳՊՀ էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակ:
31. Սույն կանոնակարգում սահմանված Համալսարանի էթիկայի, ակադեմիական բարեվարքության և վարվեցողության կանոնները, ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի դրույթները և ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի պահանջները խախտած անձինք ԳՊՀ էթիկայի և իրավունքի պաշտպանության գրասենյակի եզրակացության հիման վրա սահմանված կարգով ենթարկվում են կարգապահական և վարչական պատասխանատվության, ընդհուպ մինչև՝ Համալսարանից հեռացման: